

Հարգելի Արմինե Օհանյան,

«Պողոսյան պարտեզներ» կազմակերպությունը, որպես Երևանի Սիրահարների այգու շահագործող կազմակերպություն, նպատակ ունի Երևանին ու երևանցիներին հանգստի համար նախատեսված Պողոսյան հիմնադրամի կողմից հիմնովին վերակառուցված այգին լավագույնս պահպանել ու զարգացնել: Ընկերության կողմից այգու տարածքում ձեռնարկատիրական գործունեության նպատակն է հոգալ այգու շահագործման համար անհրաժեշտ գումարների մի մասը, սերմանելու համար հանրային տարածքների կառավարման նոր ձևաչափ:

Ցավով ծանոթացանաք Ձեր թերթի ս.թ.-ի հուլիսի 27-ի համարի առաջին էջում «Կրկնակի գնով են վաճառում» նյութին (հեղինակը նշված չէ), որտեղ նշվել են երեք մեղադրանքներ մեր ընկերության հասցեին:

Չնայած նրան որ մեր ընկերության աշխատակցի և նյութի ենթադրյալ հեղինակի միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ընթացքում պարզվեց որ չկա որևէ ձայնագրության կամ այլ իրերեն ապացույց, սակայն ամեն դեպքում մենք իրականացրել ենք անհրաժեշտ ընթացակարգերը պարզելու համար եղելությունը:

Իսկ եղելությունը այն է, որ մեր աշխատակիցը սպասարկել է տեղեկավորության կրող-նյութի հեղինակին, ապա տրամադրել է ՀՐՄ կտրոնը անմիջապես: Մեր կազմակերպությունում ՀՐՄ կտրոնը տրամադրվում են մանրադրամը վերադարձնելուց առաջ և այդ հստակ ցուցումը տրված է բոլոր աշխատակիցներին աշխատանքի անցնելու առաջին օրն ևնթ: Վերահաշվարկ է կատարվել նաև ՀՐՄ սարքավորման և փաստացի առկա ապրանքների տարբերության մասով, որի արչյունքները նորից խոսում են որ մեր աշխատակցի կողմից որևէ թյուրիմացություն տեղի չի ունեցել:

Կուզենայի նշել նաև մեր աշխատակցին վերագրվող «Ուզում եք գնեք, ուզում եք՝ չէ» արտահայտության անհնարինության համար ուղղակի անհրաժեշտ է մեկ անգամ հանդիպել նշված անձնավորությանը պատկերացում կազմելու համար որ նա նման արտահայտություն անելու ունակ անձնավորություն չէ: Նա մեր ընկերությունում է աշխատել սկսած 2009 թվականից, և որևէ մեկի մտքով չի կարող անցնել որ նա կարող է նման արտահայտություն իրեն թույլ տալ:

Իսկ ինչ վերաբերում է ընկերության գնային քաղականությանը, պատրաստակամ ենք որպես քաղաքացիների հանգստի կազմակերպման համար պատասխանատու հիմնարկություն հանդիպել և ներկայացնել ընկերության գնային քաղաքականությունը, նույնիսկ այն դեպքում երբ որպես ՍՊԸ թե՛ ՀՀ օրենքներով, թե՛ որևէ այլ իրավական փաստաթղթով նման պարտավորություն չունենք:

Մեկ անգամ ևս ցավով եմ առանց ձայնագրության նման անպատասխանատու ու մեր ընկերությանը, ընկերության ղեկավարության, աշխատակիցների գործարար ու քաղաքացիական համբավը վարկաբեկող նյութի հրապարակման համար: Կարծում եմ, յուրաքանչյուրիս պարզ է թե՛ ինչպիսի երկկողմանի հետևանքներ կարող է ունենալ նման պահվածքը, սկսած հանրային վերաբերմունքի փոփոխությունից մինև ֆինանսական կորուստներ:

Այնպես որ, խնդրում եմ հրապարակել նշված հերքումը և լինել ուշադիր մեր կազմակերպության ընդգրկմանը և նպատակներին մոտ կանգնած հիմնարկությունների աշխատանքների լուսաբանման ու քննադատության գործին:

Ապագա համագործակցության ակնկալիքով,

«Պողոսյան պարտեզներ» ՍՊԸ-ի տնօրինություն

Գլխավոր հաշվապահ  
Ա. Սահակյան

28 հուլիս 2011թ.